## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/48 -47-20

ք. Երևան «24» ___ 2020թ.

**ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը**, ի դեմս նախարարության **գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա. Խառատյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Միկրորինգ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ռ. Մալխասյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3 718 680 (երեք միլիոն յոթ հարյուր տասնութ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթ (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է

պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 26 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900011033504
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02698604

---------------------------- Ա. Խաչատրյան
(ստորագրություն) Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

**«Միկրորինգ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 33/63
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022150151001
ՀՎՀՀ 00824922

---------------------------- Ռ. Մալխասյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 24 » 02 2020 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/48 -47-20 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

<table>
<tr><th colspan="12">Ապրանքի</th></tr>
<tr><th rowspan="2">հրավեր-ով նախատեսված չափաբաժնի համարը</th><th rowspan="2">գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)</th><th rowspan="2">Անվանումը</th><th rowspan="2">ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը</th><th rowspan="2">տեխնիկական բնութագիրը</th><th rowspan="2">Չափման միավորը</th><th rowspan="2">միավոր գինը /ՀՀ դրամ</th><th rowspan="2">ընդհանուր գինը/ՀՀ դրամ</th><th rowspan="2">ընդհանուր քանակը</th><th colspan="3">Մատակարարման</th></tr>
<tr><th>հասցեն</th><th>ենթակա քանակը</th><th>Ժամկետը**</th></tr>
<tr><td>14</td><td>30232110/1</td><td>Լազերային տպիչներ</td><td>Hewlett Packard</td><td>HP LaserJet Pro M521dn Multifunction Printer<br> էյչՓի Լազերջեթ Փրո էմ521դիէն բազմաֆունկցիոնալ տպիչ
<table>
<tr><td colspan="2">Основные характеристики<br>Հիմնական բնութագրիչներ</td></tr>
<tr><td>Производитель<br>Արտադրող</td><td>HP<br>էյչՓի</td></tr>
<tr><td>Серия<br>Շարք</td><td>LaserJet Pro MFP<br>Լազերջեթ Փրո էմէֆՓի</td></tr>
<tr><td>Модель<br>Մոդել</td><td>M521dn<br>էմ521դիէն</td></tr>
<tr><td>Тип оборудования<br>Սարքավորման տեսակ</td><td>МФУ, Факс<br>էմէֆու, ֆաքս</td></tr>
<tr><td>Применение<br>Օգտագործում</td><td>Интенсивная эксплуатация, Высокоскоростная печать<br>Ինտեսիվ շահագործում, մեծ արագությամբ տպող</td></tr>
<tr><td>Технология печати<br>Տպման տեխնոլոգիան</td><td>Лазерная монохромная<br>Լազերային մոնոխրոմատիկ</td></tr>
<tr><td>Цвета, использованные в</td><td>Серый, черный</td></tr>
</table></td><td>հատ</td><td>492900</td><td>492900</td><td>1</td><td>Կառավարական 3-րդ շենք</td><td>1</td><td>II եռամսյակ</td></tr>
</table>

| | |
|---|---|
| **оформлении**<br>Գույները որոնք օգտագործվում են ձևավորման մեջ | Մոխրագույն, սև |
| **Комплект**<br>Համաքածու | |
| **Комплект поставки**<br><br>Մատակարարման համաքածուն | **Многофункциональный принтер HP LaserJet Pro M521dn включает встроенную автоматическую двустороннюю печать**<br>**встроенный Gigabit Ethernet 10/100/1000T**<br>**черный картридж с тонером HP LaserJet (~6000 стр.)**<br>**документацию к принтеру и программное обеспечение на компакт-диске**<br>**руководство по установке, лист с информацией о технической поддержке, гарантийное руководство**<br>**шнур питания**<br>**кабель для факса**<br>HP LaserJet Pro M521dn<br>էյջՓի Լազերջեթ փրո էմ521դիէն բազմաֆունկցիոնալ տպիչը ներառում է երկողմանի ավտոմատ տպում,<br>ներկառուցված Գիգաբիթ Էդերնեթ 10/100/1000Թի<br>սև քարթրիջ էյջփի լազերջեթ (~6000) էջ սև տոներ,<br>տպիչի փաստաթղթեր, ծրագրային ապահովում ներառող լազերային սկավառակ, տեղադրման ուղեցույց, տեխնիկական օժանդակության վերաբերյալ տեղեկատու թերթիկ, |

| | |
|---|---|
| | երաշխիքային ուղեցույց, սնուցման հոսանքալար, ֆաքսի մալուխ<br>էյջ Փի Լազերջեթ Փրո էմ521դիէն |
| **Конфигурация**<br>Կոնֆիգուրացիա | |
| **Процессор**<br>Պրոցեսոր | **800 МГц**<br>800 Մhց |
| **Память принтера/МФУ**<br><br>Տպիչի հիշողությունը/ ԷՄԷՖՈՒ | **256 Мб; не расширяется**<br>**Память факса до 250 страниц**<br>256 ՄԲ, չի ավելանում<br>Ֆաքսի հիշողությունը մինչև 250 էջ |
| **Экран**<br>էկրան | |
| **ЖК-дисплей**<br>ՀԲ էկրան | **3.5" (8.89 см); сенсорный, цветной**<br>3.5" (8.89 սմ); զգայուն, գունավոր |
| **Интерейс, разъемы и выходы**<br>Ինտերֆեյս, ելքեր և մուտքեր | |
| **Интерфейс**<br>ինտերֆեյս | **USB 2.0, RJ-45**<br>ՅՈՒԷՍԲԻ 2.0, ԱրՋի-45 |
| **Сетевой интерфейс**<br>Ցանցային ինտերֆեյս | **1 Гбит/сек**<br>1 Գբ/վրկ |
| **Порты**<br><br>Պորտերը | **RJ-45, 2 x RJ-11, USB 2.0 Type A, USB 2.0 Type B**<br><br>ԱրՋեյ-45 x ԱրՋեյ-11, ՅՈՒԷՍԲԻ 2.0 տեսակ ԷՅ, ՅՈՒԷՍԲԻ 2.0 տեսակ Բի |
| **ADF (податчик оригиналов)**<br>ԷՅԴԻԷՖ (բնօրինակով մատուցվող) | **Двусторонний**<br><br>Երկկողմանի |
| **Формат печатных носителей** | **A4 (210 x 297 мм), A5 (210 x 148 мм), 13x18см, A6 (4"x6", 10x15 см)**<br>Ա4 (210 x 297 մմ), Ա5 (210 x 148 մմ), |

| | |
|---|---|
| Տպվող կրիչների չափերը | 13x18սմ, A6 (4"x6", 10x15 սմ) |
| **Типы печатных носителей**<br>Տպվող կրիչների տեսակները | **Бумага (документная, в цвете, фирменные бланки, обычная, с напечатанной информацией, перфорированная, из вторсырья, грубая); конверты, наклейки, плотная бумага, прозрачные пленки, по заказу пользователя**<br>Թուղթ (փաստաթղթային, գունով, ֆիրմային ձևաթղթեր, սովորական, տպած տեղեկատվությամբ, երկրորդային հումքից, կոշտ), ծրարներ, դրոշմատիպեր, թափանցիկ թաղանթներ՝ ըստ օգտագործողի պատվերի |
| **Емкость податчика бумаги**<br>Թղթի տրման տարողականությունը | **500 листов**<br>500 թերթ |
| **Емкость многоцелевого лотка/лотка ручной подачи**<br>Բազմանպատակ արկղի/ձեռքով տրման արկղի տարողունակությունը | **100 листов**<br>100 թերթ |
| **Емкость податчика оригиналов (ADF)**<br>Մատուցող բնօրինակի տարողունակությունը | **50 листов**<br>50 թերթ |
| **Емкость выходного лотка**<br>Ելքային արկղի տարողունակությունը | **250 листов, задний лоток приема на 100 листов**<br>250 էջ, ելքային արկղը 10 թերթ վերցնող |
| **Плотность бумаги** | **52 - 120 г/м²** |

| | |
|---|---|
| Թղթի հաստությունը | 52 - 120 գր/մ² |
| **Плотность бумаги для многоцелевого лотка/ручной подачи**<br><br>Բազմանպատակ / ձեռքով դնելու արկղի համար թղթի հաստությունը | **52 - 199 г/м²**<br><br>52 - 199 գր/մ² |
| **Максимальная плотность бумаги**<br>Թղթի առավելագույն հաստությունը | **199 г/м²**<br><br>199 գր/մ² |
| **Имеет Duplex unit (модуль двусторонней печати)**<br>Պետք է ունենա կրկնակի մաս (երկկողմանի տպման մոդուլ) | |
| **Двустороннее копирование**<br>Երկկողմանի տպում | **Поддерживается**<br><br>Թույլատրվում է |
| **Параметры/функции печати**<br>Տվյալները/տպման ֆունկցիաները | |
| **Время выхода первой страницы**<br>Առաջին էջի ելքի ժամանակը | **8 секунд**<br><br>8 վ |
| **Кол-во цветов**<br>Գույների քանակը | 1 |
| **Разрешение ч/б печати**<br><br>Թույլատելիությունը՝ Սև/սպիտակ տպման | **1200 x 1200 dpi в режиме наилучшего качества**<br><br>1200 x 1200 դիփիայ լավագույն որակի ռեժիմում |
| **Максимальная скорость монохромной печати**<br><br>Առավելագույն արագությունը մոնոքրոն տպման | **40 стр./мин.**<br><br>40 էջ/ր |

| | |
|---|---|
| **Язык описания страниц**<br><br>Էջի նկարագրման լեզուն | **PCL 5, PCL 6, Эмуляция PostScript Level 3**<br><br>ՓիՍիԷլ 5, ՓիՍիԷլ 6, էմուլյացիա փոսթսքրիփթ 3-րդ մակարդակ |
| **Поддержка технологии HP ePrint**<br><br>Էյջփի ի տպող տեխնոլոգիայի թույլատրելիությունը | **Есть. Функция HP ePrint позволяет выполнять печать отовсюду. После включения функция HP ePrint назначает устройству адрес электронной почты. Для выполнения печати просто отправьте на этот адрес сообщение эл. почты с вложением документа.**<br>Առկա, Էյջփի իտպող ֆունկցիան թույլ է տալիս տպել ամենուրեք: Էյջփի իտպող ֆունկցիայի միացումից հետո սարքին տրվում է էլեկտրոնային փոստի հասցե: Տպման իրականացման համար այդ էլ փոստին ուղարկվում է հաղորդագրություն՝ կցելով փաստաթուղթը |
| **Рекомендуемая нагрузка**<br><br>Խորհուրդ տրվող ծանրաբեռնվածությունը | **2000 - 6000 страниц в месяц**<br><br>2000 - 6000 էջ ամսական |
| **Ресурс принтера**<br><br>Տպիչի ռեսուրսը | **75 000 страниц в месяц - максимальная нагрузка**<br>75 000 էջ ամսական- առավելագույն ծանրաբեռնվածութ-յունը |
| **Параметры/функции копирования**<br>Տվյալները/ պատճենահանման տվյալները | |
| **Макс. скорость ч/б копирования** | **40 стр./мин.** |

| | |
|---|---|
| Առավելագույն արագությունը ժ/թ պատճենահանում | 40 էջ/րոպ |
| **Максимальное кол-во копий**<br>Պատճենների առավելագույն քանակը | **99 копий**<br>99 պատճեն |
| **Параметры/функции сканирования**<br>Պարամետրերը/սքանավորման ֆունկցիաները | |
| **Оптическое разрешение МФУ**<br>Օպտիկական թույլատելիությունը ՄՖՈՒ | **1200 dpi при сканировании со стекла (цветное, градации серого и черно-белое)**<br>**300 dpi при использовании податчика оригиналов (цветное, градации серого и черно-белое)**<br>1200 դիփիայ ապակուց սքանավորման դեպքում (գունավոր, մոխրագույնի և սև-սպիտակի տարբեր աստիճաններ)<br>**300 dpi** բնօրինակների կիրառման դեպքում (գունավոր, մոխրագույնի և սև-սպիտակի տարբեր աստիճաններ) |
| **Двустороннее сканирование**<br>Երկկողմանի սկանավորում | **Поддерживается**<br>Աջակցվում է |
| **Скорость сканирования**<br>Սկանավորման արագություն | **До 19 страниц в минуту в черно-белом режиме, до 14 страниц в минуту в цветном режиме**<br>Մինչև 19 էջ րոպեում՝ սև և սպիտակ ռեժիմում, մինչև 14 էջ րոպեում՝ գունավոր ռեժիմում |
| **Макс. размеры области сканирования** | **216 x 297 мм при сканировании со стекла, 216 x 356 мм при использовании ADF (податчика** |

| | |
|---|---|
| Առավելագույն չափը սքանավորման շրջանում | **оригиналов)**<br>216x297 մմ ապակյա էկրանից սքանավորման դեպքում, 216 x 356 մմ ԷյԴիԷՖ-ի օգտագործման ժամանակ |
| **Формат файла сканирования**<br>Սկանավորվող ֆայլի ձևաչափը | PDF, JPG, RTF, TXT, BMP, PNG, TIFF |
| **Функции сканера**<br>Սքաների ֆունկցիաներ | **Сканирование на USB-накопитель, Сканирование в электронную почту, Сканирование на FTP-сервер, Сканирование для отправки по факсу, Сканирование на файл-сервер**<br>ՅՈՒԷՍԲԻ կրիչի վրա սքանավորում<br>Սքանավորում էլեկտոնային փոստում<br>Սքանավորում ԷՖԹԻՓԻ-սերվերի վրա<br>Սքանավորում ֆաքսով ուղարկելու համար<br>Սքանավորում ֆայլ-սերվերի վրա |
| **Факс**<br>Ֆաքս | |
| **Ускоренный набор**<br>Արագացված հավաքում | **100 номеров**<br>100 համար |
| **Разрешение факса**<br>Ֆաքսի թույլատրե-լիությունը | **300 x 300 dpi**<br>300x 300 դիփիայ |
| **Факс**<br>Ֆաքս | **33,6 кбит/сек**<br>33.6 կբթ/վ |
| **Расходные материалы / заменяемые компоненты**<br>Օգտագործվող նյութեր/ փոխարինվող մասեր բաղադրամասեր | |
| **Тип расходных** | **Картридж** |

| | |
|---|---|
| **материалов**<br>Ծախսվող նյութերի տեսակը | Քարթրիջ |
| **Картридж черный**<br>Սև քարթրիջ | **CE255A (№55A), CE255X (№55X) (экономичный) и аналоги**<br>Սի255էյ (ի 55Այ), ՍիԻ255իքս (ի55իքս) (տնտեսող) և նմանատիպ |
| **Ресурс расходных материалов/заменяемых компонентов**<br>Ծախսվող նյութերի /փոխարինվող բաղադրամասերի ռեսուրսներ | |
| **Ресурс черного картриджа или контейнера с черными чернилами**<br>Սև քարթրիջի ռեսուրսը կամ սև թանաքով արկղ | **6000 страниц**<br>6000 էջ |
| **Ресурс черного эконом. к-жа**<br>Սև էկոնոմ քարթրիջի ռեսուրս | **12500 страниц**<br>12500 էջ |
| **Разрешение копирования**<br>Պատճենահանման թույլատելիությունը | **300 x 300 dpi**<br>300 x 300 դիփիայ |
| **Объектив**<br>Օբյեկտիվ | |
| **ZOOM**<br>Չափի փոխում | **25 - 400%** |
| **Безопасность**<br>Անվտանգություն | **Слот для Kensington lock**<br>Քինգսթոն կողպեքի համար արկղ |
| **Питание**<br>Սնուցում | **от электросети**<br>Էլեկրացանցից |
| **Потребление энергии** | **760 Вт при печати, 18.2 Вт в режиме готовности, 4.3 Вт в спящем режиме, 0.3 Вт в режиме** |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Էներգիայի օգտագործում: "выключен" 760 Վտ տպելու ժամանակ, 18.2 Վտ պատրաստության ռեժիմում, 4.3 Վտ քնած ռեժիմում, 0,3 Վտ «անջատման» ռեժիմում | | | | | | | |
| 19. | 30216110/2 | Սկաներ-ներ համակար-գիչների համար | Seiko Epson Corporation | Սկաներ Epson WorkForce DS-780N<br>**Основные характеристики**<br>Հիմնական հատկանիշները<br>**Технология**<br>Տեխնոլոգիան<br>**Тип датчика** / Սենսորի տեսակը: **CIS** / ՍԻԱՅՍԻ<br>**Тип лампы** / Լամպի տեսակը: **светодиодная (White LED)** / Լուսադիոդային (Սպիտակ ԼԵԴ)<br>**Качество сканирования**<br>Սկանավորման որակը<br>**Разрешение сканера, dpi** / Սկաների թույլատելիությունը: 600x600<br>**Глубина цвета, бит** / Գույնի խորությունը: 48/24<br>**Форматы оригиналов**<br>Բնօրինակի ձևաչափերը<br>**Область сканирования на отражение, мм** / Արտացոլման սկանավորման տարածքը մմ: 215,9 x 6096<br>**Максимальный формат сканирования** / Մաքսիմալ սկանավորման ձևաչափը: A4<br>**Скорость сканирования**<br>Սկանավորման արագությունը<br>**Максимальная скорость сканирования A4, стр/мин** / Մաքսիմալ սկանավորման արագությունը: 45 | հատ | 682800 | 1365600 | 2 | Կառա-վարա-կան 3-րդ շենք | 2 | III եռամ-սյակ |

| | |
|---|---|
| **Скорость сканирования, А4, 300 dpi, страниц в минуту**<br>Սկանավորման արագությունը, Ա4 30 դիփիայ, էջ րոպեում | 45 |
| **Скорость сканирования, А4, 200 dpi, страниц в минуту**<br>Սկանավորման արագությունը | 45 |
| **Интерфейсы**<br>Ինտերֆեյսները | |
| **Интерфейс USB**<br>Ինտերֆեյս ՅՈՒԷՍԲԻ առկայություն | |
| **Интерфейс Ethernet 10/100 Base Tx**<br>Ինտերֆեյս էդերնետի 10/100 Base Tx առկայություն | |
| **Дополнительная информация**<br>Լրացուցիչ ինֆորմացիա | |
| **Автоподатчик для документов**<br>Փաստաթղթերի ավտոմատ մատակարարիչի առկայություն | |
| **Емкость автоподатчика, страниц**<br>Թղթերի ավտոմատ մատակարարիչի տարողունակությունը | 100 |
| **Скорость сканирования с автоподатчика, ЧБ, стр/мин**<br>Թղթի սկանավորման արագությունը ավտոմատ մատակարարիչից սև-սպիտակ, էջ/րոպե | 45 |
| **Скорость сканирования с автоподатчика, Цвет, стр/мин**<br>Թղթի սկանավորման արագությունը ավտոմատ մատակարարիչից գունավոր, էջ/րոպե | 45 |
| **Двустороннее сканирование** | |

<table>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td>
<table>
<tr><td colspan="2">Ունի երկկողմանի սկանավորման հնարավորություն</td></tr>
<tr><td>Поддержка ОС<br><br>ՕՀ-ի աջակցություն</td><td>OS X<br>Windows<br><br>ՕՀ իքս<br>Ուինդոուս</td></tr>
<tr><td>Комплект поставки<br>Առաքվող հավաքածուն</td><td>• USB кабель<br>• Յուէսբի մալուխ<br>• Гарантийный талон<br>• Երաշխիքային կտրոն<br>• Кабель питания<br>• Սնուցման մալուխ<br>• Сканер<br>• Սկաներ<br>• компакт-диск с драйверами<br>• կոմպակտ-սկավառակ դրայվերներով<br>• руководство по установке<br>• տեղադրման ուղեցույց</td></tr>
</table>
</td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>20.</td><td>44112190/1</td><td>Բաժանա-րարներ</td><td>NETGEAR</td><td>
Բաժանարար NetGear GS724Tv4<br>ՆեթԳեար Ջիէս724Թիվի4
<table>
<tr><td>Модель<br><br>Մոդել</td><td>GS724Tv4 (Europe GS724T-400EUS)</td></tr>
<tr><td>Описание модели<br><br>Մոդելի նկարագրությունը</td><td>24-портовый гигабитный смарт-коммутатор ProSAFE®<br>24-պորտանի գիգաբայթային սմարթ-անջատիչ</td></tr>
<tr><td>Гигабитные порты</td><td>24</td></tr>
</table>
</td><td></td><td>հատ</td><td>153750</td><td>307500</td><td>2</td><td>Կառա-վարա-կան 3-րդ շենք</td><td>2</td><td>II եռամ-սյակ</td></tr>
</table>

| | |
|---|---|
| Գիգաբայթային պորտեր | |
| **Порты SFP**<br><br>ԷսԷֆՓի պորտեր | **2 выделенных**<br><br>2 առանձնացված |
| **Максимальное количество записей MAC-адресов**<br><br>Առավելագույն քանակով ձայնագրությունները ՄԱՔ-հասցեներով | **16K**<br><br>16Կ |
| **Размер буфера**<br><br>Բուֆերի չափը | **2 Мбайт**<br><br>2 ՄԳ |
| **Поддерживаемое количество виртуальных локальных сетей (VLAN)**<br><br>Աջակցվող Վիրտուալ տեղային ցանցերի քանակը (ՎԼԱՆ) | **256** |
| **Маршрутизация VLAN**<br><br>Երթուղղում (ՎԼԱՆ) | |
| **Имеет динамическое назначение виртуальной локальной сети**<br><br>Պետք է ունենա տեղային վիրտուալ ցանցի դինամիկ հնարավորություն | |
| **Имеет Поддержка MLD Snooping**<br><br>Պետք է ունենա աջակցություն ՄԼԴ հսկիչ | |
| **Имеет Статический маршрут**<br><br>**Պետք է ունենա ստատիկ երթուղի** | |
| Количество записей в таблице ARP<br><br>ARP աղյուսակում | 512 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | գրանցումների քանակը<br>**Имеет предотвращение атак типа «отказ в обслуживании»**<br>Ունի «ծառայությունների մերժում» տեսակի հարձակումների կանխարգելում<br>**Встроенный/внешний**: **Встроенный, 100-240 В переменного тока, 50-60 ГГц**<br>Ներկառուցված / Արտաքին: Ներկառուցված 100-240 Վ<br>Հոսանքի փոփոխությունը 50-60ԳՀց<br>**Рабочая температура**: **От 0 до 50 °C**<br>Աշխատանքային ջերմաստիճանը: 0-ից մինչև 50 °C | | | | | | | | |
| 21. | 44112190/2 | Բաժանա-րարներ | NetGear | **Բաժանարար NetGear GS716Tv3**<br>ՆեթԳեար Ջիէս724Թիվի3<br>**Модель**: **GS716Tv3 (Europe GS716T-300EUS)**<br>Մոդել: Ջիէս716Թիվի (Եվրոպական Ջիէս716Թի-300ԻՅուէս)<br>Описание модели: **16-портовый гигабитный смарт-коммутатор ProSAFE®**<br>Մոդելի նկարագրությունը: 16-պորտանի գիգաբայթային խելացի-անջատիչ<br>**Гигабитные порты**: 16<br>Գիգաբայթային պորտեր<br>**Порты SFP**: **2 выделенных**<br>SFP պորտեր: 2 առանձնացված | | հատ | 103500 | 414000 | 4 | Կառավարական 3-րդ շենք | 4 | II եռամսյակ |

| | |
|---|---|
| **Максимальное количество записей MAC-адресов**<br><br>ՄԱԿ- հասցեների գրանցման առավելագույն քանակը | **16K**<br><br>16Կ |
| **Размер буфера**<br><br>Բուֆերի չափը | **2 Мбайт**<br><br>2 Մբայթ |
| **Поддерживаемое количество виртуальных локальных сетей (VLAN)**<br><br>Վիրտուալ տեղային ցանցերի (VLAN) աջակցվող քանակը | 256 |
| **Имеет маршрутизация VLAN**<br><br>Պետք է ունենա երթուղղում VLAN | |
| **Имеет динамическое назначение виртуальной локальной сети**<br><br>Պետք է ունենա դինամիկ հնարավորություն վիրտուալ տեղային ցանցի համար | |
| **Имеет Поддержка MLD Snooping**<br><br>Պետք է ունենա աջակցություն MLD Snooping | |
| **Имеет статический маршрут**<br><br>Պետք է ունենա Ստատիկ երթուղի | |
| **Имеет предотвращение атак типа «отказ в обслуживании»**<br><br>Ունի «Ծառայությունների մերժում» տեսակի հարձակման կանխարգելում | |
| **Встроенный/внешний** | **Встроенный, 100-240 В переменного тока, 50-60 ГГц** |

| | |
|---|---|
| **Максимальное количество записей MAC-адресов**<br><br>ՄԱԿ- հասցեների գրանցման առավելագույն քանակը | **16K**<br><br>16Կ |
| **Размер буфера**<br><br>Բուֆերի չափը | **2 Мбайт**<br><br>2 Մբայթ |
| **Поддерживаемое количество виртуальных локальных сетей (VLAN)**<br><br>Վիրտուալ տեղային ցանցերի (VLAN) աջակցվող քանակը | 256 |
| **Имеет маршрутизация VLAN**<br><br>Պետք է ունենա երթուղում VLAN | |
| **Имеет динамическое назначение виртуальной локальной сети**<br><br>Պետք է ունենա դինամիկ հնարավորություն վիրտուալ տեղային ցանցի համար | |
| **Имеет Поддержка MLD Snooping**<br><br>Պետք է ունենա աջակցություն MLD Snooping | |
| **Имеет статический маршрут**<br><br>Պետք է ունենա Ստատիկ երթուղի | |
| **Имеет предотвращение атак типа «отказ в обслуживании»**<br><br>Ունի «Ծառայությունների մերժում» տեսակի հարձակման կանխարգելում | |
| **Встроенный/внешний** | **Встроенный, 100-240 В переменного тока, 50-60 ГГц** |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ներկառուցված / Արտաքին: Ներկառուցված, 100-240Վ, փոփոխական հոսանքի 50-60 ԳՀց<br>**Рабочая температура**: От 0 до 50 °C<br>Աշխատանքային ջերմաստիճան: 0-ից մինչև 50°C | | | | | | |
| 45. | 30232130/1 | Գունավոր տպիչներ | HP | HP Color LaserJet Pro MFP M280nw ֆունկցիաներ՝ տպում, պատճենում, սքան, COMPATIBLE OPERATING SYSTEMS: Windows 10 (32-bit/64-bit) / USB, Ethernet, Wi-Fi / Recommended monthly page volume 150 to 2,500 / HP ePrint / Apple AirPrint / Mopria-certified / Wireless Direct Printing / Mobile Apps | հատ | 164550 | 658200 | 4 | Մ.Մկրտչյան 5 | 4 | III եռամսյակ |
| 46. | 30216110/1 | Սկաներներ համակարգիչների համար | HP | HP ScanJet Pro 3500 - f1 L2741A AUTOMATIC DOCUMENT FEEDER SCAN SPEED: մինչև 25 ppm/50 ipm (300 dpi) / SCANNING OPTIONS (ADF): Single pass E-Duplex / COMPATIBLE OPERATING SYSTEMS: Windows 10 (32-bit/64-bit) | հատ | 240240 | 480480 | 2 | Մ.Մկրտչյան 5 | 2 | III եռամսյակ |

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900011033504
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02698604

------------------- **Ա.Խառատյան**
(ստորագրություն) **Կ.Տ.**

**ՎԱՃԱՌՈՂ**

**«Միկրորինգ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 33/63
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022150151001
ՀՎՀՀ 00824922

------------------- **Ռ. Մաքսայան**
(ստորագրություն) **Կ.Տ.**

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Տնտեսագիտական դասակարգում | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 14. | 30232110/1 | 5122 | Լազերային տպիչներ | - | - | - | 492900 | 492900 | 492900 | 492900 | 492900 | 492900 | 492900 | 492900 | 492900 | 492900 |
| 19. | 30216110/2 | 5122 | Սկաներներ համակարգիչների համար | - | - | - | - | - | - | 1365600 | 1365600 | 1365600 | 1365600 | 1365600 | 1365600 | 1365600 |
| 20. | 44112190/1 | 5122 | Բաժանարարներ | - | - | - | 307500 | 307500 | 307500 | 307500 | 307500 | 307500 | 307500 | 307500 | 307500 | 307500 |
| 21. | 44112190/2 | 5122 | Բաժանարարներ | - | - | - | 414000 | 414000 | 414000 | 414000 | 414000 | 414000 | 414000 | 414000 | 414000 | 414000 |
| 45. | 30232130/1 | 5122 | Գունավոր տպիչներ | - | - | - | - | - | - | 658200 | 658200 | 658200 | 658200 | 658200 | 658200 | 658200 |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 46. | 30216110/1 | 5122 | Սկաններներ համակարգիչների համար | - | - | - | - | - | - | 480480 | 480480 | 480480 | 480480 | 480480 | 480480 | 480480 |
| | Ընդամենը՝ | | | | | | 1214400 | 1214400 | 1214400 | 3718680 | 3718680 | 3718680 | 3718680 | 3718680 | 3718680 | 3718680 |

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900011033504
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02698604

------------------------ **Ա. Խառատյան**
(ստորագրություն) Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

**«Միկրորինգ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 33/63
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022150151001
ՀՎՀՀ 00824922

------------------------ **Ռ. Մախսայան**
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 3
«24» 02. 2020թ. կնքված
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/48 - 41-20 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_______________
_______________
գտնվելու վայրը _______________
հհ _______________
հվհհ _______________

Պատվիրատու
_______________
_______________
գտնվելու վայրը _______________
հհ _______________
հվհհ _______________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 24 » 02. 2020թ. կնքված
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/48 -4Յ-20 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. __________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________
ազգանուն, անուն

______________________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն